




Ինչպես մեզ գտնել

«Այբ» ավագ դպրոց



Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +(374 94) 546498, +(374 96) 500456
Էլ. փոստ՝ school@ayb.am
Կայք՝ www.aybschool.am


«Այբ» դպրոցի մասին

«Այբ» դպրոցը Հայաստանում առաջին դպրոցական ավանն է իր բոլոր առանցքային բաղադրիչներով՝ դպրոց (ավագ, միջին և կրտսեր), եկեղեցի և համայնքային կենտրոն, մեդիա արվեստների կենտրոն, սպորտային համալիր, հանրակացարաններ, այգիներ և այլն: «Այբ» դպրոցը ձգտում է դառնալ 21-րդ դարի չափանիշներին համապատասխան դպրոց, որն իր շուրջ կհամախմբի կրթությունն արժևորող հասարակություն, կնպաստի հայկական կրթության մրցունակության բարձրացմանը, կդաստիարակի կրթված, առաքինի, մրցունակ սերունդ: «Այբ» դպրոցում համադրվում են ազգային դպրության լավագույն ավանդույթներն ու համաշխարհային կրթության նորագույն նվաճումները, մշակվում ու փորձարկվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ:

«Այբ» դպրոցում երեխաները սովորում են օրինակով. սա միջավայր է, որտեղ դասավանդում ու կրթական գործընթացում նրանց հետ շփվում են կրթությամբ կայացած, իրենց ոլորտներում հաջողակ մարդիկ ու մասնագետներ, ովքեր սովորեցնում են մտածել, ձգտել, փորձարկել, հասնել: «Այբ» դպրոցի ամեն աշխատակից, ուսուցիչ, հիմնադիր, հոգաբարձու և բարերար օրինակ է, ինչը, մեր համոզմամբ, կրթելու ու դաստիարակելու ամենահզոր միջոցն է:

«Այբ» դպրոցը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր:

«Այբ» կրթական հիմնադրամ



Երևան 0009, Կորյունի 19ա, 9-րդ հարկ
Հեռ.՝ +(374 10) 543707, 546498
Ֆաքս՝ +(374 10) 543707
Էլ. փոստ՝ info@ayb.am
Կայք՝ www.ayb.am, www.foundation.ayb.am



Հետևիր մեզ Facebook-ում և ուղղիդ թո հարցերը՝
Ayb Educational Foundation
Ayb fan club



Այբ

ավագ դպրոց

Հաջողության ճանապարհն ունի սկիզբ



Սիրելի աշակերտ,

«Այբ» ավագ դպրոցը հայտարարում է 2012-2013 ուս. տարվա ընդունելություն: Այս թերթումը համառոտ տեղեկություններ է պարունակում «Այբ» դպրոցի ընդունելության, կրթության բովանդակության, կրթաթոշակային համակարգի մասին: Եթե ուսումն ու գիտելիքը բեզ համար արժեք են, եթե դու հավատում ես, որ կրթությունը կյանքում հաջողության հասնելու և կայանալու լավագույն ուղին է, ապա դու այն աշակերտն ես, ում մենք ցանկանում ենք տեսնել «Այբ» դպրոցում:



Կրթության բովանդակություն

Ահա «Այբ» դպրոցի հիմքում ընկած կրթական մոտեցումները՝ համառոտ.

Անհատական ուսումնական ծրագիր/ «Այբ» դպրոցում գործում է ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտային համակարգ: Ամեն աշակերտ ունի իր անհատական ծրագիրը, որը կազմված է հիմնական և ընտրովի առարկաներից՝ ստանդարտ և խորացված մակարդակներով: Առարկաների ընտրությունը աշակերտը կատարում է՝ ելնելով ընտրած մասնագիտական ուղղությունից, և իր ուսումնական ծրագրի մեջ մտնող առարկաներից հավաքում նվազագույն կրեդիտներ:

Արվեստ, սպորտ, հասարակական ակտիվություն/ Յուրաքանչյուր աշակերտ պետք է պարտադիր ընտրի դասաժամեր արվեստից: Լողն ու մարմամարզությունը դպրոցում պարտադիր առարկաներ են: Աշակերտը պետք է իրականացնի նաև հասարակական աշխատանքի որոշակի նվազագույն ծավալ:

Լեզուներ/ «Այբ» դպրոցում դասավանդման լեզուն հայերենն է: Լուրջ ուշադրություն է դարձվում նաև անգլերենի և ռուսերենի դասավանդմանը: Աշակերտներն իրենց ցանկությամբ ընտրում են նաև այլ օտար լեզուներ:

Ծրագրահեն ուսուցում/ Աշակերտը ուսման ընթացքում ներգրավված է իրական ծրագրերում կամ նախագծերում՝ գործնականորեն կիրառելով ձեռք բերած գիտելիքները, կողմորոշվելով ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Մասնագիտական ուղղորդում/ Ավարտական դասարանում դպրոցն ուղղորդում է աշակերտին հետագա մասնագիտացման հարցում, օգնում նախապատրաստվել բուհ ընդունվելուն (այդ թվում՝ միջազգային թեստային քննությունների՝ AP, SAT, TOEFL):


Միջավայր

«Այբ» դպրոցը զինված ու համարված է ստեղծագործ գաղափարների իրականացման անհրաժեշտ տեխնոլոգիաներով՝ կրթական տեխնիկա և սարքավորումներ, ժամանակակից հագեցած լաբորատորիաներ, հարուստ գրադարան, այսինքն՝ այն ամենը, ինչը թույլ է տալիս ընթանալ արագորեն զարգացող գիտությանը համաբայլ և իրական ժամանակում փորձարկել ձեռք բերած գիտելիքները:

Կրթաթոշակներ

Ուսման վճարի հատուցում

«Այբ» դպրոցը մասնավոր կրթության ոլորտում **առաջին սոցիալական ծրագիրն** է: «Այբ»-ի կրթաթոշակային համակարգը հավասար հնարավորություն է ընձեռում բոլոր աշակերտներին, անկախ վճարումնակությունից, սովորել մեր դպրոցում: «Այբ» դպրոց ընդունվում են ՄԻՎՅՆ ըստ քննությունների արդյունքների: Դպրոց ընդունվելուց հետո աշակերտը կարող է դիմել «Այբ» կրթական հիմնադրամի Ֆինանսական աջակցության հանձնաժողովին՝ կրթաթոշակ (ուսման վճարի հատուցում) ստանալու ակնկալիքով: «Այբ» ավագ դպրոցում ուսման արժեքը կազմում է տարեկան 2 250 000 դրամ: 2011-2012 ուս. տարում ընդունված 72 աշակերտներից 51-ը «Այբ» հիմնադրամից ստացել են ֆինանսական աջակցություն: Մեր սկզբունքը հետևյալն է. չի լինի որևէ աշակերտ, ով չի հաճախի դպրոց անվճարունակության պատճառով, և չի լինի մեկը, ով կընդունվի դպրոց վճարունակության շնորհիվ:



2012-2013 ուս. տարվա ընդունելություն

«Այբ» ավագ դպրոց կարող են դիմել այսօրվա **9-րդ դասարանցիները**, ովքեր կշարունակեն ուսումը «Այբ» դպրոցում 10-12-րդ դասարաններում:

Սիրելի դիմորդ, ահա թե ինչ քայլեր է պետք ձեռնարկել «Այբ» ավագ դպրոց ընդունվելու համար.

1 / Դեկտեմբերի 25 - մարտի 21. Ամեն չորեքշաբթի
Գրանցվիր «Բաց դռների» միջոցառումներին: Այստեղ դու կարող ես անձամբ տեսնել դպրոցի հնարավորությունները, ուղղել բեզ հետաքրքրող բոլոր հարցերը: Գրանցվելու համար գրիր welcome@aybschool.am հասցեով:

2 / Փետրվարի 13 - մարտի 31
Մասնակցիր անվճար «Մինի-դասերին», որոնք կօգնեն քեզ նախապատրաստվել ընդունելության քննություններին: «Մինի-դասերն» անցկացվում են տարբեր առարկաներից: Գրանցվելու համար գրիր mini_lessons@aybschool.am հասցեով:

3 / Մարտի 26 – ապրիլի 6
Ներկայացրու ընդունելության հայտը, որը մարտի 15-ից կգտնես մեր կայքում՝ www.aybschool.am: Ընդունելության հայտը պետք է լրացնել էլեկտրոնային տարբերակով (առցանց), ապա նաև տպել, ստորագրել ու ներկայացնել դպրոց այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, այդ թվում՝ անգլերենի բարձր-միջին մակարդակի (3A Upper-Intermediate) ինացությունը հաստատող փաստաթուղթ: Մանրամասները՝ www.aybschool.am կայքում:

4 / Ապրիլի 9, 11, 13. Ընդունելության I փուլ. Զննություններ
Հանձնիր ընդունելության քննությունները: Զննությունները տարբեր են, կախված թո ընտրած մասնագիտական ուղղությունից («Հասարակական գիտություններ» կամ «Գիտություն»): Մանրամասները՝ www.aybschool.am կայքում:

5 / Մայիսի 1-6. Ընդունելության II փուլ. Հարցազրույց
Զննությունները հաջող հանձնելու դեպքում դու կանցնես հարցազրույցի փուլ, որը ոչ պակաս կարևոր և որոշիչ փուլ է:

6 / Մայիսի 10
Այս օրը կիրառարկվեն ընդունելության արդյունքները:

Եթե հաջողություն:

Ֆինանսական աջակցության դիմումներ

Մայիսի 14 – հունիսի 22

«Այբ» ավագ դպրոց ընդունվելուց հետո միայն դու կարող ես դիմել «Այբ» կրթական հիմնադրամի Ֆինանսական աջակցության հանձնաժողովին՝ լրացնելով ու ներկայացնելով համապատասխան հայտ, որի հիման վրա քեզ կտրամադրվի կրթաթոշակ «Այբ» ավագ դպրոցում սովորելու համար: Ֆինանսական աջակցության հայտի ձևը կգտնես մեր կայքում մայիսի 1-ից:

«Այբ» դպրոցի ընդունելության մանրամասն ժամանակացույցը հասանելի է www.aybschool.am կայքում: